

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԺԵ. ԴԱՐԻ ՄԻ ՁԵՌԱԳԻՐ ԱՒԵՏԱՐԱՆ

Իրանի Չարմահալ գաւառի Մամուռան գիւղից քառորդ փարսախ հեռու, գէպի հարաւ, մի ընդարձակ, կանաչազարդ դաշտի վրայ ընկած է մի գիւղ: Դա նախկին հայտնակ Լիւսանան է, որ եղել է գաւառի նշանաւոր, հարուստ եւ ամենահին գիւղերից մէկը: Հիմնուել է Շահ Արքայի ժամանակ, 1670 թուին:

Գիւղի ճիշդ մէջտեղում կանգնած եկեղեցում 1946 թուին խմբովին Հայաստան դադարած Հայ գիւղացիները գուրդուրանքով պահում էին երեք ձեռագիր Աւետարան, որոնք կոչւում էին «Ս. Յովհաննու» (Մկրտչի), «Ս. Գէորգ» եւ «Զրէֆոր» (Ս. Առաքել): Սրանցից ամենահինը «Ս. Յովհաննու» Աւետարանն է, որի պատկերն է.

թուղբ՝ 264 (528 էջ), մեծութիւն՝ 18x14 սմ., գրութիւն՝ երկսիւն, նիւթ՝ բամբակեայ թուղթ, կազմ՝ փայտեայ կաշեպատ չաղանակապէս, մագաղաթէ պահպանակ՝ սկիզբը երկու թերթ, հանգամանք՝ լաւ. ընկած են 189-192 էջերը, գիր՝ բոլորգիր, առաջին մասը մինչեւ 133 էջը զեղեցիկ սև բոլորգիր է, ապա տառերը մեծանում են եւ կորցնում իրենց զեղարուեստական ներդաշնակութիւնը, նիւթ՝ չորս աւետարանիչների, կիսախորաններ, նուրբ զեղարդեր եւ լուսանցքներում մանրանկար դարդեր: Կան լուսանցքադարձեր եւ ծաղկադրեր եւ թռչնադրեր: Փամանակ՝ հայոց Ջրե (925 և 551=1476), գրիչ՝ եզեկիէլ, թէ Ստեփանոս, տեղը՝ Այրիվանք, ե վանքա Աւրնջուց: 1606 թուին, Շահ Արքայի բռնի գաղթի ժամանակ, Հայ գիւղացիները ձեռագիրը Հայաստանից իրենց հետ բերել են Լիւսանան գիւղը:

Աւետարանի զեղեցիկութիւնը կազմում են մանրանկարները, որոնց վրձինն է նկարիչ Ստեփանոս Եպսկ. Առնջեցի, մէկը

Ժն. դարի այն վաստակաւոր մանրանկարիչներից, որ 1476-1477 թուականներին Աւրնջուց վանքում (Կոտայքում) ծաղկել է երկու Աւետարան, Շարակնոց եւ Մալտոց: Ահա յիշատակարանի վկայութիւնները:

էջ 112ր — «Մաղկեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ Ստեփաննոս Եպսկոպոսի, ի վանքս Աւրնջուց ի դառն եւ ի նեղ ժամանակիս, զի զնաց Հասան Բէկն եւ զերեաց զմիսս (գ' Լրաց) տուն թվ. Ջրե (926+551=1477)»:

էջ 259 — «... Արդ ես անարժան եւ յոգնամեղ եւ փծուն եւ անարհեստ գրիչս Ստեփաննոս սկսաւ զծագրել ի վանս հրաշալի Այրիվանք»:

— «... Արդ ես յոգնամեղ եւ անխմաստս ի մանկունս եկեղեցոյ անարհեստ զծագրող սուրբ աւետարանիս անարժան ի քահանայս Ստեփաննոս հանդերձ ծնաւդաւք խմովք յիշման արժանի առնել»:

Երեք յիշատակարաններն էլ ընդդժում են Աւետարանը նկարող արուեստագէտի անունը, իսկ առաջին յիշատակարանն իր բովանդակութեամբ բաց է անում նաեւ Հայոց պատմութեան մի մասը էջը: Դա 1477 թուականն է, Հասան Բէկի խանութեան եւ զերիշխանութեան դառն եւ «վշտաշարժ» ժամանակաշրջանը, երբ ինքնակալը գերում է Հայ մարտիրոսին, իսկ «անօրէնները» անիրաւ սրահանջներ են կատարում եւ քայքայում մարտիրոսի տնտեսութիւնը: Այս շրջանում էլ Աւետարանը գերի է բնկնում եւ օգտատոււմ միայն 1680 թուին:

Աւետարանում ուրոյն տեղ են զբաւում մանրանկարները: Զարդարուած է չորս աւետարանիչների սկիզբով, զուռազեղ պատկերներով, չորս խորաններով, նուրբ զեղարդերով եւ լուսանցքներում մանրանկար

դարդերով: Ժե. դարի մանրանկարչական արուեստի թանկագին մնացորդներ են զբարանք եւ ցալտուն զաղափար են տալիս նոյն դարաշջմանի տաղանդաւոր նկարչի արուեստի եւ ոճի հիմնական դժերի մասին: Այդ տեսակէտից էլ առանձին արժէք են ներկայացնում եւ արժանի են ուշադրութեան:

Սակայն, ընդդէմէնք, որ ձեռագրերի նրկարներէրց առանձնապէս ուշադրաւ են նուրբ դեղագրերը, դունադեղ եւ տարբեր ոճերով վրձինուած լուսանցադարդերը եւ զեղեցիկ թռչնապարդերը, որոնք զբաւիչ են իրենց ինքնատիպ արուեստով, գեղարուեստական գծադրութեամբ եւ գոյների ընդհանուր ներդաշնակութեամբ. իսկ դիմանկարներէրց ուշադրաւ է 166-րդ էջում վրձինուած կինը: Դա մէկն է Ժե. դարի իդական սեռը պատկերող պայծառ գէմքերից: Նստել է նա ծնրադիր, առանձին քնքուութեամբ, եւ զբաւիչ դիրքով. մի ձեռքը պարզել է, իսկ միւսով բռնել է մի փոքրիկ զաւաղան: Պարզ, բայց զեղեցիկ ճաշակով սանրած սեւ վարսերն առանձին զբաւելութիւն են տալիս նրա պայծառ ու հանդարտ գէմքին: Հազել է կարմիր եւ զեղին երանդով պարզ բայց սիրուն մի զգեստ, որն իր ամբողջութեամբ ցալտուն զաղափար է տալիս Ժե. դարի Հայուհու տարադի եւ նրա ճաշակի մասին: Լրդ տեսակէտից էլ նկարն ազդագրական ուրոյն արժէք է ներկայացնում. մի ստեղծագործութիւն, որը յիշեցնում է տաղանդաւոր Հայ մանրանկարի: Թորոս Տարունցու վրձինը, որ այնքան հմտութեամբ պատկերել է կանացի գէմքերն ու ձեւերը:

Մի հանդամանք պարզ է, որ գրչագրի մանրանկարները, մեծ մասամբ, դժուած են բաւական վարպետ վրձինով: Դա Ժե. դարի նկարչական այն ինքնատիպ արուեստն է, որից խորապէս ազդուել են Սպահանի արարձանի Նոր-Ջուղայի Ժե. դարի մանրանկարչական դպրոցի արուեստագէտները: Առհասարակ, Ժե. դարի Այրիվանքի ու Առնջուց վանքի եւ Ժե. դարի Նոր-Ջուղայի նկարչական տարբեր դպրոցների ազդեցութեան եւ փոխյարաբերութեան կարեւոր հարցերը պարզելու տեսակէտից 1476 թուականին գծուած մանրանկարները թանկագին փաստաթղթեր են:

Ձեռագիրն ունի նաեւ մի քանի կարեւոր

յիշատակարաններ, որոնք չարագրուած են ՄՏ. 109ր, 111ր, 187ր, 259, 262-րդ էջերում եւ տարբեր ժամանակներում: Դրանցից պատմական ուրոյն արժէք է ներկայացնում 262-264 էջերի յիշատակարանը, որ իր բովանդակութեամբ նկարում է Ժե. դարի գաղթի եւ Հայ ժողովրդի տանջանքների մտայն պատկերը, միաժամանակ նկարագրում է 1606 թուին Շահ Աբրահիմ ձեռքով Թուրքի գաղաքի զբաւումը, Տաճիկ զորքերի պարտութիւնն ու կոտորածը եւ Նախիջևան ու Երևան քաղաքների պաշարումը: Շահ Աբրահիմ Մեծի այդ արշաւանքներն էլ ընդգծում են նրա քաղաքական մեծ յաջողութիւնները: Մտնում է նա Հայաստան, աւերում էլն քաղաքները եւ բոնի գաղթեցնում Հայ ժողովրդին: Ուշագրաւ այն է, որ գրչագիրը նկարագրում է իրրեւ գաղթին ու անցքերին մասնակից ու ակախատեա:

Ժե. դարի պատմական յիշատակարանը ձեռագրից այստեղ առաջ բերենք ամբողջութեամբ, որի սկզբի երկու տողը կարմիր, յետոյ սեւ թանաքով է գրուած, իսկ 12 տողն էլ կառուցուած է բանաստեղծութեամբ.

Էջ 262

«Բրիստոս գրած եւ ոգորմած,
Բրիստոնէից Տէր Աստուած,
Չողորմութեան քո զգուռն քաց-
լո՛ւր տառապեալ քրիստոնէեաց,
Յամեն զիմաց եմք մեմք նեղած,
Եւ ամէն ազգաց կոխան եղած.
Նկեղեցիք քազում քալած,
Բազում խաչեր է խորտակած.
Գիրք եւ աւետարան գերի տարած,
Կանայք եւ տղայք գերի վարած,
Գիշեր, ցերեկ կամք վարանած,
Է սա ամենն ի մեր մեղաց,
Որ բարկացար Հայոց ի քվականիս
Հայոց ՌՄԵ (1055+551=1606) ի ժամանակիս,

որում Շահապաս արքայն պարսից եկեալ
պաշարեաց զԹարվիզ եւ կոտորեաց զպարս
առձկաց, քանզի գնացեալ էին Ալի Փաշայն
եւ ամէն դարաւարքն Թարվիթոյ, Նեղը-
ւանա եւ Երեւանա ի վերայ Դաղիրէկին ի
Սալմաստ եւ ի դառնայն նոցա զամենայն

գնոսս սրախողխող արարեալ եւ բազումք ի քրիստոնէից անդ կոտորեցան եւ առեալ զքաղաքս Թարվիզոյ եւ անցեալ զնացեալ էառ զնեղջրան եւ անցեալ զնաց ի Յերեւան եւ պաշարեաց զնա ամիսս Թ (9) եւ ի հարկի կացուցեալ էառ զքաղաքն, բայց չէ փոյթ երկարել մեզ զպատմութիւն մարտի պատերազմիս այսորիկ: Այլ հկեսցուք ի Թարվիզ եւ ասացուք փոքր ի չառէ գնեղութիւն եւ զարջարանս քրիստոնէից ազդիս թէ զինչ եղև քնդ մեղ քան(դի) ել հրաման ի յարքայէն թէ ով ոք աւժարեսցի բրնակել աստի, կացցէք եւ ով ոք ո՛չ աւժարեսցի, երթիցեն իւրաքանչիւր տեղիս իւրեանց: յայնժամ բազումք ի հայոց եւ ի տաճկաց պուղի անկեալ ելեալ զնացին ճանապարհի դաւուրս Բ (2), իսկ անաւրէն պարոնայքն քուրթ ազդի զամենեւեան ըզնոսս զայրոն կոտորեալ եւ զկանայսն եւ զողայսն զերի արարին եւ զայն տեսեալ խեղճ եւ ողորմել(ի) քրիստոնէիցս ահի եւ երկնազի կայեայք ի տուէ եւ ի զիշերի: Եւ յայեայք հայրք եւ մայրք ի վերայ որդոց եւ զաւակաց մերոց միշտ եւ հանապաղ վտաց անկեալ կայեայք թէ լինելոց հմք: յայնժամ ողորմած եւ մարդասէրն Աստուած որ ո՛չ կամի զմահ մեղաւորին, այլ զղառն(ալ) նորա, արկեալ դութ ի սիրտ արքային տուեալ հրաման հայոց թէ հայք ազատք են, բայց երթալոյ ուրեք-ուրեք հրաման չկայ: կացցեն աստ մինչ ի դարուն, եւ յորժամ ի մարտ ամիսն մտանիցեն, ամենեւեան ելեալ զնացեն ի Շաւշ (Շօշ) քաղաքն, որ կոչի Ասպայան (Ապահան): յայնժամ տառապեալ ազգս հայոց զայն լուեալ, ուրախացաք, ուրախութիւն մեծ եւ փառս տուեալ Աստուծոյ աւրհնեցաք զարարիչն մեր: Եւ յորժամ եղև դարուն, ել հրաման արքայէն զի զազգս հայոց ի թիւս առցեն զայրոն եւ զկանայսն, մանաւանդ զողայսն եւ զազջկունս մինչեւ քստընդեա մանկունսն եւ բերին զազգս հայոց ի Սպահան, բայց ազգն պարսից ո՛չ սիրեն զազգս մեր այժմ

այսօրէս: Այժմ ասացուք թէ զինչ եղև ասայլ ամեն ազգս հայոց: եղև հրաման արքայէն զի երթիցեն, զերեսցեն զտունս հայոց զկառս, զՇիրակունիս, զԱրծկէ, զԱրճէշ, զԲերկերի, զԹնուս, զԵրեւան, զՆախաջրան, զՋուղայ, զԱղբաղ, զՍաղմաստ եւ զնացեալ զերեցին եւ զբազումս սրախոյխող արարին եւ զերեցին եւ զայս տեսեալ խաւարեալ աշաց մերոց ի խոր խոցոտի, զալարի եւ խարչատի աղիք մեր այս ամէն եկին ի վերայ մեր վասն մեղաց մերոց, բայց զճար չունիմք քան զԲրիստոս փառք Աստծոյ հաղար բերան: Արդ ի վերջին ժամանակիս նորողեցաւ սուրբ աւետարանս ի թվին հայոց ՌԾԵ (+ 551=1606)-ին, ի Թաղաւորութեան Շահ-ապագին, ի հայրապետութեան էջմիածնոյ Տեառն Դաւիթ կաթողիկոսին: Յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք բարեմիտ եւ հեղափոխի Տէր Միքայէլ քահանային եւ կողակցին, Նսեֆին եւ որդոցն Սարգսին եւ Փիրատլանին եւ զգաւերացն եւ զարեան մերձաւորսն իւր ամէն: Դարձեալ յիշեցէք զպարոն Յակոբճանն եւ զճնողսն իւր զհայրն ուստայ Մկրտիչն, զմայրն Դահար Սուլթանն եւ զկողակիցն իւր զՍուլթան խանուսն, որ եւ նորողել զսուրբ աւետարանս... (պակասում է) ի տուր բարեաց մեզ յիշողացդ եւ մեզ յիշեցելոց առհասարակ ողորմեցի Բրիստոս Աստուածն մեր ի միւս անգամ զալստեան իւրուս ամէն: Արդ (չորս տող անընթեռնլի)»:

Այս կարեւոր յիշատակարանը չի արձանագրուած հայերէն ձեռագրերի հմուտ մտնադէտ, Հայաստանի Ակադեմիայի գիտական աշխատակից եւ տաղանդաւոր բանասէր՝ Լ. Ս. Խաչիկեանի «ԺԵ. Դարի Հայերէն Զեռագրերի Յիշատակարաններ» խորագրով արժէքաւոր Բ. գրքում, որ պատկերում է 1451-1480 թուականը: Այդ էական պակասը լրացնելու համար 1476 թուականին դրուած ձեռագիր Աւետարանի յիշատակարանը այստեղ նոյնութեամբ առաջ ենք բերում:

Փեհիւնի (Իրան)

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ